

տարազներուն ներկայ պիտի ըլլայ ամէն կըտրիճ, ընկերութեան սնտուկէն ամէն տարի «վեց նէմէցի զլօք» նպաստ պիտի տրուի ազքատ աշակերտ կարգացնող տիրացուին: Եղբայրութիւնը պիտի ունենայ վեց ջահ՝ զոր վեց կտրիճներ պիտի կրեն թափօրներու ատեն: Կտրիճները ամէն Ծնունդի՝ աւետիսի եւ զատկին Հայր Մեր պիտի պտտին բրէՖէքլին եւ մարշայէրին առաջնորդութեամբ. երբ երկրին առաջնորդը քաղաք գոյ՝ ձիւտը ընդառաջ պիտի երթան կտրիճները, եւ մեկնած ատեն՝ յուղարկ. երբ եղբայր մը մեռնի բոլոր կտրիճները պիտի մասնակցին յուղարկաւորութեան իրենց կերոններով. երբ մեռնողը ազքատ է՝ Եղբայրութեան սնտուկը պիտի հոգայ թաղման ծախքը. կտրիճները, ինչպէս ցարդ ըրեր են, պիտի փորեն մեռած եղբոր մը կամ ուրիշի մը փոսը. կտրիճները պարտաւոր են իրարու հանդէսը ցոյց տալ փոխադարձ յարգանք:

«ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ԵՂԻՍԱՔԷԹՈՒՊՈՒՍՈՅ ՄԷՁ

Եղիսաքէթուպոլիս, ԺԸ. դարուն վերջին քառորդին հիմնուած իրր հայ գաղթականութիւն, առաջին օրէն իսկ ունէր իր եղբայրութիւնները: Աստուծէ շատերը անշուշտ Մոլտովիայէն իրենց հետը բերին:

Սխալ է կարծելը թէ Ստեփաննոս Ռօզայ, Լեհաստանէն գալով 1729-ին, հիմը դրաւ այդ եղբայրութիւններուն: Անոնք արդէն կային: Իր մտահոգութիւնը եղաւ միայն անոնց նոր կանոնադրութիւններ շարադրել, մասնաւորապէս զանոնք մօտեցնելով կաթոլիկ եկեղեցիին:

1718 Յունուար 3-ին Եղիսաքէթուպոլիս խմբադրուած սահմանադրութեան մը մէջ կը հանդիպինք յօդուածներու, որոնք զանազան եղբայրութեանց գոյութիւնը կ'ապացուցանեն.

Ե. յօդուածը կ'ըսէ թէ մեռելի մը տէրը՝ փոսը փորող եղբայրութեանց երիտասարդներուն պէտք է վճարէ 3, 2, կամ 1 հօրկօշ, իր կարողութեան համեմատ. բայց թաշկինակ տալու հրաման չկայ. եթէ երկրորդ եղբայրութիւն մըն ալ գտնուի՝ այն ատեն անոր ալ թաշկինակը տրուի: Եթէ եղբայրութեան մը անդամները տունը չգտնուելով փոս չկարենան փորել՝ այն ատեն միւս եղբայրութիւնը փորէ փոսը: Բայց այս պարագային՝ դրամը կ'իսուի

երկու ընկերութեանց մէջ: Երբ որ եղբայրները տունն են՝ միւս եղբայրութիւնը ամենեւին զործի խառնուելու չէ:

Ը. յօդուածը կ'ըսէ թէ Եղբայրութիւնը՝ իր պետերովը (վատահներովը) միասին՝ պէտք է ծառայութիւն ընէ փեսին մինչեւ որ սրակէն տուն գան:

ԺԳ. յօդուածին մէջ կ'ըսուի թէ Հարսնիքի մը ատեն 8 թաշկինակ բաժնուելու է միայն, մէկը փեսին, երեքը հարսնհօր, երեքը փեսին հօր կամ եղբոր, մէկն ալ վատահին:

ԺԸ. յօդուածը կը տրամադրէ որ փեսան բաղնիք երթալու ժամանակ՝ տասներկու մարդ ալ հետը լուացուի, մէկը քահանան, մէկը հարսնհայրը, մէկը վատահը, եւայլն:

Ի. յօդուածով կ'ըսուի, որ երբ կտրիճները աւետիսի կը պտտին, մէկ տուն մը միայն երգելու են, որպէսզի շատ չերկարի երգը:

Ստեփաննոս Ռօզայ, ինչպէս Կեռլա, նոյնպէս Եղիսաքէթուպոլսոյ մէջ վերահաստատեց «Կտրիճվորաց Եղբայրութիւն» մը՝ նուիրուած Ս. Ստեփաննոսի:

Հայր Գովրդիկեան որ Թրանսիլվանիոյ կաթոլիկերութեանց մասին այս թանկագին տեղեկութիւնները կուտայ՝ Եղիսաքէթուպոլսոյ եղբայրութեանց կանոնադրութիւնները զանց կ'ընէ արձանագրել, յայտնելով որ անոնք յար եւ նմանն էին Կեռլայի մէջ հիմնուածներուն, բոլորին ալ խմբադրողը եղած ըլլալով Ստեփաննոս Ռօզայն:

Հայր Գովրդիկեան տեղ մը կը յիշէ թէ Ս. Ստեփաննոսի Եղբայրութիւնը Մայր եկեղեցին կառուցուած ատեն նուիրած է 5229 Փիօրին:

Ստեփաննոս Ստեփանեան Ռօզայ 1728, Սեպտ. 28-ին Կեռլայէն Վենետիկ՝ Միսիթար Արբահօր զրկած իր մէկ նամակին մէջ «Տե'ս Բազմալիւայ, 1923, թիւ 2, էջ 64) կ'ըսէ. —

«Ահա ես շնորհիւ Տեառն աւարտեցի զԱյցարարութիւն իմ աստի հայաքաղաքն Կեռլայ, եւ զկնի սակաւ աւուրց չուելոց եմ յիպիշվալովն (= Եղիսաքէթուպոլիս), եւ անտի նախ ձմեռն սաստկանալ սկսցի յերկիրն իմ (= Կամենից) դարձայց: Սահմանելով իմ զեղբայրութիւնս ոմանս Աշխարհականաց...:

Եղիսաքէթուպոլսոյ «կտրիճ»ներուն մա-